ՉԱՊՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ

Չապրվող ժամանակի մեջ մի մութ խորխորատ կա, որտեղով ես այդպես էլ չեմ կարողանում անցնել: Վախենո”ւմ եմ, զգուշանո”ւմ, թերանո”ւմ…

Լիլին՝ իմ նեղաչք հարևանուհին, ընդմիջումից հետո գործի փութալիս, երթուղայինի լիքը կանգառում ականջիս մեջ նստած՝ իր հարբեցող ամուսնուն էր մաս առ մաս քրքրում, իսկ ես այդ ամբողջ ժամանակ քո մասին էի մտածում: Լիլին միշտ ասում էր, որ կանխապես ամուսնու լայն թիկունքին էր ապավինել՝ հարկ եղած դեպքում այդ պարարտ զանգվածի հետևում պատսպարվելու համար: Բայց նրա մտահղացումը սին դուրս եկավ, ինչպես աշխարհի բոլոր հորինյալ սերերը: Լիլին էլ դա հրաշալի գիտեր, և այդ օրը, ընդմիջումից հետո աշխատանքի փութալիս, մարդկանցով լի կանգառում կենտ մի մարդ էր տեսել՝ ես էի: Կարող էի, իհարկե, չդառնալ այդ հնազանդ ականջը, բայց այդ միակը ես եղա, որովհետև համոզված էի՝ դու էլ նախընտրում ես լայն թիկունքով տղամարդկանց: Լիլին իմ ականջի մեջ լուռ հայհոյում էր ամուսնուն, նրա ճարպոտ թշերը…Եվ ես այդ բառերը ընկալելի չէի լսում, որովհետև դրանց մեջ արտաայբուբենային տառեր կային, որոնք ոչ մի կերպ չէին իմաստավորվում Լիլիի լեզվի վրա: Լիլիի Քերոբ ամուսինն անհուսալի գինեմոլ էր, և ես, բնականաբար, դրանում ոչ մի մեղք չունեմ: Լիլին ինչո”ւ էր նեղանում, որ անհաղորդ եմ նրա վատ քողարկված անբավարարվածությանը: Ես ընդամենը մտքերով իմ ապրված ապագայի հետ էի, որովհետև չեմ հասցրել, չեմ հասցնում, չեմ հասցնի հասցեական փոխանցել չապրվող ժամանակի մեջ, միապաղաղ կյանքի մեջ առկա՝ միայն ինձ ծանոթ խորխորատի եզրին ծնված հուսահատ մտքերս:

Երթուղայինը սև ծխի մեջ տարավ Լիլիի դժգոհությունը, և ես խղճալով նրան՝ դարձյալ մտածում էի իմ ապրված ապագայի մասին, որովհետև երբ այն տեսա իմ բիբերի սահմաններից դուրս, ինձ ամենածանոթ դեմքն անասելի դժգույն էր: Այնքան դժգույն էր, որ ես Լիլիի՝ իմ հարևանուհու, բավարարված չլինելուն անտարբեր մնալով, շարունակում էի անցյալի իմ մարմնով ապագայով տառապել: Մոտավորապես այնպես, ինչպես Լիլիի ամուսին Քերոբը՝ օղու շիշը դատարկվելուց հետո: Մեր տառապանքները, սակայն, տարբեր են, և երբ ես տեսնում եմ անցյալի տեսքով իմ ապագան Հակարիի սահմանից դուրս՝ ինձ ամենածանոթ դեմքը դադարում է սեփական պատկերով ինձ ներկայանալ:

Չմոռացված հասցեներից ես հիմա օտար հոտեր եմ առնում, որից քիմքս ջղաձիգ քոր է գալիս: Ես օտար բույրերի հանդեպ դյուրագրգիռ եմ՝ ինչպես քմահաճ աղջկա ալերգիան, երբ նրան անբույր ծաղիկներ են բերում: Երևի հենց դրա համար էլ այլևս չեմ ուզում որևէ մեկին ծաղիկներ նվիրել, թեպետ մարզիկի կազմվածքով մի տղա երբեմն դա անում է իմ փոխարեն՝ չզգալով, որ պնդացած մատների մեջ ծաղիկը տրորվում-տառապում է: Փոխարենը կարելի է գուցե քաղցրավենիք բերել ոչ թե նրա համար, որ հիմա դա ամենադժվար ճարվողն է, այլ որ քաղցր խոսքերի կարիք կա ամենուր՝

ավտոբուսի կանգառում, ավտոբուսի կանգառից աջ-ձախ, վերև-ներքև: ՔԱՂՑՐԸ ուրիշ բացատրություն ունի մեր բառապաշարում. դա ես միտումնավոր ներարկել եմ այն մեղվի անթույն խայթով, որով մի անգամ ինձ խայթել էր 10, 20, 30 տարի առաջ: Այդ թվերին դու ուշադրություն մի դարձրու, դրանք իմ ծերանալու տարեթիվն են նախանշում իրենց ռեբուսային ու ծիծաղելի ոճով:

..Ես փախա լիքը կանգառից, որովհետև երթուղայինը սև ծխի մեջ տարել էր իմ հարևանուհի Լիլիին, ու մի անանուն պատկեր ամբողջ փողոցը լցրել էր չմոռացված հասցեներից փչող անծանոթ հոտերով: Ես փախա այդ կեղեքող հոտերից, բայց թե ուր, չգիտեմ: Խնդրում եմ, եթե ինձ հանդիպեք որևէ տեղ՝ կանգառում, կանգառից աջ-ձախ, վերև-ներքև, խորը նայեք աչքերիս մեջ: Իմ բիբերից դուրս և դրանց ներսում ես ուզում եմ վերականգնել մի մոռացվող պատկեր, որի անունը թերևս միայն ես գիտեմ:

Գուցե գնամ, փնտրեմ այդ անունը հացի հերթերի մեջ, թանկարժեք լոլիկի կամ ձմերուկի հերթերի մեջ: Հացի հերթերի մեջ բոլորս տառապյալ ենք ու զիջող, քանզի ամենքս իրար նման ենք: Զարմանալի բան է երբ քաղցած ենք, իրար հանդուրժում ենք, երբ կուշտ ենք՝ հակոտնյա ենք: Իսկ սիրո մեջ լրիվ հակառակն է, և բլոկադան բնավ մեղավոր չէ, որովհետև Հակարիից դուրս և Հակարիից ներս կյանքը նույնը չէ, ինչպես որ նույնը չեն մարդիկ:

Իմ հարևան Լիլին, ամուսնուց դժգոհ, ավտոբուսի սև ծխի մեջ գնաց հնազանդ ականջ փնտրելու, թեպետ նա ըստ էության աշխատանքի էր գնում: Եւ քանի որ նրանց աշխատավայրում բոլորը հոգով ու մարմնով քաղցած են, ինչպես մեր մայրաքաղաք-քաղաքում, ուստի հազիվ կգտնի իր ուզածը: Եւ ո՞վ է, ասեք, ցայսօր կարողացել գտնել իր ուզածը. իմ հարևան Լիլիի ամուսին Քերոբը տառապում է օղու սակավությունից, Լիլին՝ անթաքույց անբավարվածությունից, ես…

Ես, գիտես, ծանր եմ տանում օտար հոտերը, որոնք քամին երբեմն բերում է ձեր տնից: Երկինքն էլ այդ հոտերն ունի, ծառերը, խոտերն էլ ունեն, որոնք նաև փոխվում են, երբ ծառը ծերատում կամ խոտը հնձում են: Ես այստեղ, Հակարիից ներս, ծերանում եմ ավելի արագ, քան տիեզերանավերը՝ աստղերի բնակավայրը հետազոտելիս: Մենք անծայրածիր հորիզոնները ակոսող տիեզերանավերը չենք տեսնում՝ միայն պատկերացնում ենք, բայց ահա իմ ծերանալը նկատելի է, և դա առաջինը դու ես նկատում: Դու երևի շրջափակման մեջ գտնվող միակ անձնավորությունն ես, որ քաղց չունես՝ մարմնի, հոգու: Եւ երևի ճիշտը դու ես, որովհետև միակն ես բոլոր պարագաներում: Եւ ես անգամ ուրախ եմ դրա համար: Հակարիից անդին կյանքն, այո, ուրիշ է, բայց երանելին սա՛ էր, երբ միշտ որոնելու-գտնելու բան ունես, թեկուզ թանկ գնով, թեկուզ անգամ կյանքիդ գնով: